Պատիժներ: Գիւղի առբաբը, դատաւորն իր քմահաճոյքի համաձայն պատիժ է նշանակում. ամենասովորական պատիժը տուգանքն է, որ գործադրւում է ամենաանխիղճ կերպով, բացի այդ ծեծում են ու բանտարկում:

Հարկեր: Ինչպէս ասացի՝ գիւղերից մեծ մասը «առբաբի»—կալւածատիրական է, իսկ փոքր մասը «խալէսէ»—արքունական: Կալւածատիրական գիւղերը վճարում են ստացած բերքի «սէքուն»—երրորդական մասը, գլխահարկ ու մալեաթ (պետական հարկ), բայց այդ բաւական չէ, նրանք վճարում են նաև մի շարք անանուն—ապօրինի հարկեր: Իսկ «խալէսէ» գիւղերի բնակիչները վճարում են միայն իրենց մշակած գետնի հարկը:

Լուսաւորութիւն—կրթութիւն: Այդ տեսակէտից Փէրիան ներկայացնում է մի տխուր պատկեր: Գրագիտութիւնն ու տարրական բաւարար կրթութիւնը դեռ չի թափանցել գիւղացիների խաւերում, որովհետև չկան գիւղացիների կրթութեան ծառայող հիմնարկութիւններ, որով դարևոր կուլտուրական առաջխաղացումներն իրենց մշտական հոսանքներով շատ քիչ են ազդել նրա հոգու և մտքի վրայ ու նա մնացել է սոսկ խաւարի ընկեր, բայց այդ հանգամանքը պիտի բացատրել նրանով, որ գաւառն ընկած լինելով խուլ ու մութ մի անկիւնում, քաղաքների հետ յարաբերութիւն ունենալու դիւրութիւնից զուրկ է, որով գիւղացիները համարեա գրքի կամ լրագրի երես չեն տեսնում և այդ գրքաբախտ հանգամանքների շնորհիւ է, որ Փէրիայի կուլտուրական—կրթական գործը չափազանց տխուր և անմխիթար վիճակի մէջ է գտնւում: Գիւղացիութեան մեծամասնութիւնը դեռ անկիրթ ու անգրագէտ է. գրագէտ տղամարդկանց թիւը հասնում է 7%, իսկ կանանց թիւը շատ փոքր է:

Նոյն տխուր պատկերն են ներկայացնում գիւղական դպրոցները. մխիթարական չէ լոյս սփռող տաճարների դրութիւնը: Այստեղ գոյութիւն չունեն իսկական, կանոնաւոր դպրոցներ, ոչ էլ պատրաստուած, իրենց կոչմանն արժանի